

## ՀՈՍՔԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԵՂԱՍԱԿ ՓՈԽԱԴԱՐՉ ԿՈՎԳՈՒԼՄԱՄԲ

### Ա. Կ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ Էկոնոմիկայի ճախսարարություն մտավոր սեփականության  
գործակալության գլխավոր փորձագետ

### Ա. Գ. ԹՈՂՋՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու,  
ՀՀ Էկոնոմիկայի ճախսարարություն ռազմատնտեսական  
և գորահավաքային ծրագրերի վարչության պետ

### Գ. Մ. ԹՈՂՋՅԱՆ

Վ. Ա. Չերնոմիրյանի անվան Մոսկվայի պետական  
բաց համալսարանի ուսանող

### Ա. Մ. ԹՈՂՋՅԱՆ

Երևանի պետական ֆինանսատնտեսագիտական քոլեջի ուսանող  
Ժ. Ի. ԱԲՐԱՅԱՆՅԱՆ

Քիմիական գիտությունների թեկնածու,  
«Նախրիտ գործարան» ԲԲԸ լաբորատորիայի վարիչ

Աշխատանքը վերաբերում է շրջակա միջավայրի պահպանությանը, մաս-  
նավորապես՝ լատերս պարունակող հոսքաջրերի մաքրման եղանակներին և  
կարող է կիրավել հնչանական, այնպես էլ տարրեր բնագավառների  
արդյունաբերություններում՝ հոսքաջրերի վնասազերծման նպատակով:

Նայտնի է լատերս պարունակող հոսքաջրերի մաքրման եղանակ (DE 4229264, C02F1/52, 1994), համաձայն որի հոսքաջրի մաքրումը իրականաց-  
նում են կոագուլման եղանակով՝ հոսքաջրին ավելացնելով կոագույանտ կամ  
ֆլոկուլյան՝  $\text{FeCl}_3$ ,  $\text{AlCl}_3$ ,  $\text{Al}_2(\text{SO}_4)_3$  և 0,1-0,25%-անոց ֆլոկուլյանտի ջրային  
լուծույթ: Եղանակի թերությունը բանկարժեք կոագուլյանտի և ֆլո-  
կուլյանտներով՝ կոագուլյանտի կիրառումն է, ինչպես նաև կողմնակի նյութերով (կոագուլյանտներով և ֆլո-  
կուլյանտներով) աղտոտումը:

Նայտնի է նաև լատերս և բազմադիսպերս պոլիմերային մասնիկներ պա-  
րունակող հոսքաջրերի մաքրման եղանակ (RU 2204531, C02F1/52,  
C02F1/52, 2003), որը համդիսանում է որպես ամենամոտ նմանակ: Եղանակը  
ներառում է հետևյալ փուլերը. հոսքաջրին  $\text{CaO}-\text{MgO}$  պարունակող կոագուլ-  
յանտի ավելացում, կոագուլման փուլ և մակարդված մասնիկների հեռացում:

Եղանակի թերությունը իր բարդության մեջ է, որը կապված է  $\text{CaO}-\text{MgO}$   
պարունակող հագեցած կոագուլյանտի պատրաստման անհրաժեշտության

մեջ, ինչպես նաև հոսքաջրի կողմնակի նյութերով (կոագույանտներով և ֆլո-կուլյանտներով) աղտոտումը:

Ուսումնասիրության խնդիրն է բարձրացնել լատեքս պարունակող հոսքաջրերի մաքրման (վճասազերծման) աստիճանը, բացառել հոսքաջրի անօրգանական նյութերով աղտոտումը, բարելավել հոսքաջրերի մաքրման գործընթացի պայմանները, ինչպես նաև արդյունքում ստացված մակարդվածքը կիրառել որպես երկրորդային հումք:

Մեր կողմից կատարված փորձերի արդյունքում ստացել ենք, որ լատեքս պարունակող հոսքաջրին ավելացնում են մակարդիչ (կոագույանտ), խառնում, որից հետո անջատում են մակարդված մասնիկները ջրային ֆազից: Որպես մակարդիչ օգտագործում են բուտաղիենից քլորոպրենի արտադրության քլորոպրենի օլիգոմեր կամ 2,3-երկլորորուտաղիենի քլորոպրենի հետ համապոլիմեր պարունակող հոսքաջուր, հոսքաջրի և մակարդիչի 1,0:(0,3-0,5) ծավալային հարաբերակցությամբ՝ արդյունքում տեղի է ունենում փոխադարձ (զանմայա) կոագուլում:

Եղանակն իրականացնում են հետևյալ կերպ.

Լատեքս պարունակող հոսքաջրերի մաքրումը մակարդման (կոագուլման) եղանակով իրականացնում են մակարդիչի ավելացմամբ: Որպես մակարդիչ օգտագործում են բուտաղիենից քլորոպրենի արտադրության հոսքաջուրը, մասնավորապես՝ քլորոպրենի օլիգոմեր (մինչև 1000 մոլ. զանգվ.) կամ 2,3-երկլորորուտաղիենի քլորոպրենի հետ համապոլիմեր պարունակող հոսքաջուր, արդյունքում տեղի է ունենում փոխադարձ (զանմայա) կոագուլում:

Լատեքս պարունակող հոսքաջրերի մաքրումը կոագուլման եղանակով իրականացնում են ռեակտորի մեջ, որն ունի խառնիչ: Լատեքս պարունակող հոսքաջրերին ավելացնում են մակարդիչ և խառնում 5 րոպե: Խառնումը դադարեցնելուց հետո թողնում են 30 րոպե, այնուհետև անջատում են մակարդված մասնիկները ջրային ֆազից: Մակարդվածքն օգտագործում են որպես երկրորդային հումք ռեսինատեխնիկական արդյունաբերությունում:

Օրինակ 1. 1000-1200մգ/լ քանակությամբ քլորոպրենային լատեքս պարունակող հոսքաջրին անընդհատ խառնման ընթացքում ավելացնում են որպես կոագուլանտ քլորոպրենի օլիգոմեր կամ կամ 2,3-երկլորորուտաղիենի քլորոպրենի հետ համապոլիմեր պարունակող հոսքաջուր: Քլորոպրենային լատեքս պարունակող հոսքաջրի և քլորոպրենի օլիգոմեր կամ 2,3-երկլորուտաղիենի քլորոպրենի հետ համապոլիմեր պարունակող հոսքաջրի ծավալային հարաբերակցությունը 1:0,4 է: Այնուհետև խառնում են 5 րոպե և թողնում 30 րոպե: Արդյունքում մաքուր լուծույթն անջատում են մակարդվածքից:

Օրինակ 2. 800-1000մգ/լ քանակությամբ քլորոպրենային լատեքս պարունակող հոսքաջրին անընդհատ խառնման պայմաններում ավելացնում են մակարդիչ քլորոպրենի օլիգամեր կամ 2,3-երկլորորուտաղիենի քլորոպրենի հետ համապոլիմեր պարունակող հոսքաջուր: Քլորոպրենային լատեքս պարունակող հոսքաջրի և քլորոպրենի օլիգամեր կամ 2,3-երկլորորուտաղիենի քլորոպրենի հետ համապոլիմեր պարունակող հոսքաջրի ծավալային հարաբերակցությունը 1:0,3 է: Այնուհետև խառնում են 5 րոպե և թողնում 30 րոպե: Արդյունքում մաքուր լուծույթն անջատում են մակարդվածքից:

Աշխատանքի առանձնահատկությունները հետևյալն են.

- ա. որպես կազուլյանտ օգտագործում են դժվար մաքրվող հոսքաջուր,  
բ. երկու հետեղոգեն հոսքաջրերի փոխադարձ կոագուլման եղանակը  
թույլ է տալիս մաքրել հոսքաջուրը դժվար հեռացվող պոլիմերային  
նյութերից,  
գ. ստացված մակարդվածքն օգտագործում են ռետինատեխնիկական  
արդյունաբերությունում,  
դ. հոսքաջրերի մաքրումից հետո ստացված հիմնային հոսքաջուրը կա-  
րելի է օգտագործել թթվային հոսքաջրերի չեզոքացման համար:

Այսպիսով՝ լատեքս պարունակող հոսքաջրերի մաքրման եղանակը թույլ  
է տալիս պարզեցնել եղանակը՝ բացառելով մակարդիչի պատրաստման փուլը, հոսքաջրի կողմնակի նյութերով աղտոտումը, կրծատել մաքրման ծախսը՝  
օգտագործելով այլ արտադրության թափոն հոսքաջուրը՝ բուտաղիենից քլո-  
րոպրենի արտադրության հոսքաջուրը, ինչպես նաև կիրառել արդյունքում  
ստացված մակարդվածքը որպես երկրորդային հումք:

### **Բանալի բառեր – լատեքս, հոսքաջրեր, կոագուլյանտ**

#### **Տեղեկատվության աղյուր**

1. RU 2204531, C02F1/52, C02F1/52, 2003
2. Գ. Թոռչյան, Մ. Թոռչյան, Ա. Թոռչյան, Ա. Մխիթարյան, Ժ. Աբրահամյան // Կառչուկի  
արտադրության հոսքաջրերի մաքրման եղանակ // ՀՀ ԱՐՏՈՆԱԳԻՐ N 2800,  
C02F1/00, հայտի ներկայացման թվական 09.10.2013, Գյուտի հիմնական  
արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը 29.01.2014

# СПОСОБ ОЧИСТКИ СТОЧНЫХ ВОД ПРОИЗОДСТВА КАУЧУКА

**А. К. МХИТАРЯН**

*Кандидат технических наук, доцент ГГУ,  
главный эксперт по интеллектуальной собственности  
Министерства экономики РА*

**М. Г. ТОРЧЯН**

*Кандидат технических наук,*

*начальник администрации по управлению военно-экономическим и  
мобилизационным программам Министерства экономики Республики*

*Армения*

**Г. М. ТОРЧЯН**

*Студент Московского государственного открытого  
университета имени В. С. Черномырдина*

**А. М. ТОРЧЯН**

*Студент Ереванского государственного финансово-экономического  
колледжа*

**Ж. И. АБРАМЯН**

*Кандидат химических наук, начальник  
лаборатории ЗАО „Завод Наиритъ“*

Статья посвящена охране окружающей среды, в частности, способу очистки сточных вод, содержащих синтетический латекс.

К сточным водам добавляют коагулянт, перемешивают, затем отделяют образовавшийся коагулят от водной фазы. В качестве коагулянта используют сточные воды, содержащие олигомер хлоропрена или сополимер 2,3-дихлорбутадиена с хлоропреном, при объемном соотношении сточных вод и коагулянта, равном 1,0:(0,3-0,5), в результате чего повышается степень очистки сточных вод.

## WAY PEELINGS SEWAGES

**A. K. MKHITARYAN**

*Doctor of Technical Sciences, Associate Professor of GSU,  
Chief Expert of the Agency of Intellectual Property of the RA Ministry of  
Economy*

**M. G. TORCHYAN**

*PhD of Technical Sciences,  
Head of the Military  
and Mobilization Department of the RA Ministry of Economy*

**G. M. TORCHYAN**

*Student of Moscow State Open University after V. S. Chernomyrdin*

**A. M. TORCHYAN**

*Student of Yerevan State Financial and Economical College*

**ZH. I. ABRAHAMIAN**

*PhD of Chemistry,  
Head of Laboratory of "Nairit Factory" LLC*

Work to protect the environment.